Կարգապահական գործ թիվ ԿԳ-25068

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ՆԵԼԼԻ ՍԼԱՎԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան **Նելլի Սլավիկի Մինասյանին (այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2564) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Մարինե Ալավերդյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ)**, հայտնել է, որ 2024թ. կամավոր սնանկության դիմում ներկայացնելու համար դիմել է փաստաբան Նելլի Մինասյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան)**:

Ըստ Դիմողի՝ ծառայությունների դիմաց Փաստաբանին վճարվել է 400.000 ՀՀ դրամ, սակայն վերջինս որևէ պայմանագիր չի կնքել, լիազորագիր չի կազմել և սնանկության գործով կամավոր սնանկության դիմում դատարան չի ներկայացրել:

Թիվ ԿԳ-25068-2-Ա
16 հուլիսի 2025թ.

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը զանգերին չի պատասխանել և վերջին անգամ կապի է դուրս եկել 2024թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Դիմողը խնդրել է հարուցել կարգապահական վարույթ, քանի որ Փաստաբանը բարեխիղճ իրավական օգնություն չի ցուցաբերել, պայմանագրի լուծումից հետո, հրաժարվել է վերադարձնել գումարը:

Դիմողը նշել է նաև, որ Փաստաբանը սպառնացել է փաստաբանական գաղտնիքի բացահայտմամբ, մասնավորապես՝ սպառնացել է Դիմողի ընտանիքի անդամներին պատմել այն մասին, որ Դիմողը սնանկության գործ է ցանկանում հարուցել դատարանում:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 02.06.2025թ. Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց:

Դիմողը 11.06.2025թ. գրությամբ խնդրել է, որ կարգապահական վարույթին ընթացք չտրվի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ իր և Փաստաբանի միջև վեճը սպառվել է:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Նելլի Մինասյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Մարինե Ալավերդյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 21.04.2025թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Մարինե Ալավերդյանը դիմել է իրեն դատարան սնանկության դիմում ներկայացնելու համար: Ըստ Փաստաբանի՝ գործի նախնական ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Դիմողը վերջին երեք տարվա ընթացքում կատարել է անշարժ գույքի հետ կապված գործարք՝ պարզաբանելով, որ դա կարող է խնդիրներ առաջացնել: Նշվածով պայմանավորված, Փաստաբանն առաջարկել է Դիմողին սպասել հինգ ամիս:

Փաստաբանը նշել է, որ մինչև նշված ժամկետի ավարտ Դիմողը հայտնել է, որ հարկադիր ծառայությունից պետք է իր տուն գնան և գույքագրում անեն: Փաստաբանի պնդմամբ, փորձ է կատարվել կանխել հարկադիր ծառայության գործողությունները, իսկ այդ ժամանակ Դիմողը որպես իր տան հասցե հարկադիր կատարողին տրամադրել է Փաստաբանի հասցեն: Փաստաբանը հայտնել է, որ Դիմողը չի ցանկացել, որ տան անդամներն իմանան իր պարտքերի մասին:

Փաստաբանը հայտնել է Դիմողին պայմանագրի լուծման և գումարի վերադարձման վերաբերյալ, սակայն Դիմողը պահանջել է տոկոսներ: Ըստ Փաստաբանի՝ նշված իրադարձություններից հետո իրեն պարբերաբար զանգահարել են տարբեր տղամարդիկ՝ պահանջելով վերադարձնել վճարված գումարները, հայհոյել և վիրավորել: Փաստաբանը

Դիմողին հայտնել է, որ գումարը կվերադարձնի Դիմողի ամուսնուն՝ ակնկալելով վերջինիս օժանդակությունն իրեն ուղղված հեռախոսազանգերը դադարեցնելու հարցում:

Փաստաբանը հավելել է նաև, որ Դիմողի անունից իրեն դիմել է փաստաբան, ում բացատրել է ամբողջական պատկերը և վերջինս հասկանալով իրավիճակը, հրաժարվել է Դիմողին օգնելուց:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 02.06.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը որևէ բացատրություն և (կամ) ապացույց չի ներկայացրել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 30.04.2025թ. թիվ 152-Ա/ԿԳ-25068 որոշմամբ փաստաբան Նելլի Մինասյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.1.3, 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

07.05.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Ծովինար Քուրքչյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 07.07.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել հետևյալ փաստերը՝

1. Փաստաբանն, առանց պայմանգիր կնքելու, փաստացի ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը և պարտավորվել է Դիմողի անունից ներկայացնել կամավոր սնանկության դիմում: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև կողմերի նամակագրությունից:*

2. Փաստաբանը Դիմողի անունից կամավոր սնանկության դիմում չի ներկայացրել: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

3. Փաստաբանը հրաժարվել է ստանձնած պարտավորություններից:

4. Փաստաբանը չի վերադարձրել Դիմողին ծառայության դիմաց ստացած 400.000 ՀՀ դրամ գումարը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ, ինչպես նաև կողմերի նամակագրությունից:*

Միաժամանակ, ըստ Աշխատակցի, սույն գործի շրջանակներում ներկայացված դիմումների և ապացույցների ուսումնասիրությունից հաստատված չի համարվում հետևյալ փաստը.

- Փաստաբանը չի պատասխանել Դիմողի զանգերին: *Սույն փաստը չի հաստատվում, քանի որ Դիմողի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել:*

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 07.07.2025թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 16.07.2025թ. ժամը 20:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդի 13.05.2025թ. թիվ 9/11-Ա որոշմամբ՝ փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանի փաստաբանական գործունեության թիվ 2564 արտոնագրի գործունեությունը դադարեցվել է՝ այն ճանաչելով ուժը կորցրած: *Սույն փաստը հաստատվում է 13.05.2025թ. թիվ 9/11-Ա որոշմամբ, ինչպես նաև Պալատի Աշխատակազմի ղեկավարի կողմից տրված 15.07.2025թ. թիվ ԿԳ/272-25 տեղեկանքով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Նելլի Մինասյանը փաստաբան է հանդիսանում 30.04.2019թ. և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում, փաստաբանն ունի 2 կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Նելլի Մինասյանի նկատմամբ հարուցված Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.3, 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի խնդիրներն են, ի թիվս այլնի,* ***վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման,*** *ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է՝*** *ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով,* ***պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները****:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական* ***հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն*** *այն դեպքում, երբ՝ կարգապահական խախտումը կատարելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով փաստաբանի* ***արտոնագրի գործողությունը դադարեցվել է:***

Վերոգրյալ նորմերի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում , որ Պալատը օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, կարգապահական վարույթների միջոցով, վերահսկողություն է իրականացնում փաստաբանների նկատմամբ, վերջիններիս կողմից Օրենքով և Կանոնագրքով սահմանված պահանջների խախտման դեպքում:

Նշվածից հետևում է նաև, որ կարգապահական վարույթի սուբյեկտ է հանդիսանում փաստաբանի կարգավիճակ ունեցող անձը: Ավելին, բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանի արտոնագրի գործունեությը դադարեցվում է՝ նախկինում թույլ տված կարգապահական խախտման համար հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Տվյալ դեպքում, Պալատի նախագահի 30.04.2025թ. թիվ 152-Ա/ԿԳ-25068 որոշման հիման վրա փաստաբան Նելլի Մինասյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3, 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Այն ժամանակահատվածում, երբ հարուցված կարգապահական գործը գտնվել է նախապատրաստման փուլում, Պալատի Խորհուրդը որոշում է կայացրել փաստաբան Նելլի Մինասյանի փաստաբանական գործունեության արտոնագիրը դադարեցնելու վերաբերյալ: Այսպիսով, Պալատի Խորհուրդի 13.05.2025թ. թիվ 9/11-Ա որոշմամբ՝ փաստաբան Նելլի

Սլավիկի Մինասյանի փաստաբանական գործունեության թիվ 2564 արտոնագրի գործունեությունը դադարեցվել է՝ այն ճանաչելով ուժը կորցրած: Որոշվել է Նելլի Մինասյանին հանել փաստաբանների ցուցակից:

Նշվածը հաշվի առնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ առկա է Օրենքով նախատեսված կարգապահական գործի վարույթը կարճելու հիմքը, ինչից ելնելով Հանձնաժողովը չի անդրադառնում Նելլի Մինասյանի թույլ տված կարգապահական խախտումների գնահատմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Նելլի Սլավիկի Մինասյանի (արտոնագիր՝ թիվ 2564) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3, 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25068 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25068-2-Ա
16 հուլիսի 2025թ.
ք.Երևան